«Տնտեսական ազատության ինդեքս- 2011» ըստ «Հերիթիջ» հիմնադրամի գնահատականների

«Հերիթիջ» հիմնադրամը, «Ուոլ Սթրիթ» օրաթերթի հետ համատեղ, տարբեր պաշտոնական աղբյուրների տվյալների հիման վրա գնահատել և 2011թ. հունվարի 12-ին հրապարակել է 183 երկրների համար 2011թ.-ի տնտեսական ազատության ինդեքսները: Այդ ինդեքսի գնահատման սկզբունքները և մեթոդիկան հետևյալն է՝ նախ, կիրառվում է 0-ից մինչև 100 տոկոս գնահատման համակարգ, ընդ որում՝ բարձր գնահատականը վկայում է տնտեսական ազատության ավելի մեծ աստիճանի մասին: Երկրորդ, տնտեսական ազատության ինդեքսը գնահատելիս օգտագործվում են 50 անկախ տնտեսական գործոններ, որոնք ներառվում և գնահատվում են 10 խոշոր գործոնների մեջ: Այդ խոշոր գործոններն են՝ ***գործարարության ազատությունը, առևտրի ազատությունը, հարկաբյուջետային ազատությունը, կառավարության ծախսերը, դրամավարկային ազատությունը, ներդրումների ազատությունը, ֆինանսական ազատությունը, սեփականության***

իրավունքը, կոռուպցիայից ազատությունը և աշխատանքի ազատությունը:

2010թ. տնտեսական ազատության ինդեքսի գնահատման համար «Հերիթիջ» հիմնադրամի փորձագետները հիմք են ընդունել 2009թ. հուլիսի 1-ից մինչև 2010թ. հունիսի 30-ը ընկած ժամանակաշրջանի տնտեսական ցուցանիշները: Սակայն հարկ է նկատի ունենալ, որ որոշ գործոններ գնահատվել են պատմական տեղեկատվության հիման վրա: Այսպես, օրինակ, 2011թ. ***դրամավարկային ազատություն*** *գործոնի գնահատման համար հիմք է ընդունվել 2007-2009թթ. միջին կշռված տարեկան գնաճը, մինչդեռ, որպես հարկավորման ցուցանիշ վերցվել են 2010 թ. հարկային տարվա հարկային դրույքները:*

Հայաստանի գնահատականները*. Համաձայն «Հերիթիջ» հիմնադրամի գնահատականների, Հայաստանը 2011թ.-ին գնահատվել է որպես ազատականացված բիզնես միջավայր ունեցող երկիր: «Տնտեսական ազատության ինդեքս 2011» հետազոտությունում Հայաստանի դիրքը բարելավվել է և աշխարհի 183 երկրների շարքում գրավում է 36-րդ տեղը՝ նախորդ տարվա 38-րդ տեղի փոխարեն: Ընդ որում, Հայաստանը աշխարհի 183 երկրների շարքում*

գործարարության ազատությամբ *գրավում է 28-րդ,* ***առևտրի ազատությամբ***՝ *43-րդ,* ***հարկաբյուջետային ազատությամբ***՝ *25-րդ,* ***կառավարության ծախսերի մակարդակով***՝ *38-րդ,* ***դրամավարկային ազատությամբ***՝ *81-րդ,* ***ներդրումների ազատությամբ***՝ *26-րդ,* ***ֆինանսական ազատությամբ***՝ *17-րդ,* ***սեփականության իրավունքի պաշտպանվածությամբ***՝ *99-րդ,* ***կոռուպցիայից ազատությամբ***՝ *122-րդ և* ***աշխատանքի ազատությամբ***՝ *45-րդ տեղերը:*

Հայաստանի 2011թ.-ի տնտեսական ազատության ընդհանրական գնահատականը նախորդ տարվա համեմատ ավելացել է 0.5 միավորով, քանի որ փոփոխություններ են կատարվել դրա հիմքը հանդիսացող առանձին գործոններում (տես աղյուսակ. 3): Այսպես, 2010թ.-ի համեմատ բարելավվել են ***առևտրի ազատության*** *(5.0 միավորով),* ***դրամավարկային ազատության*** *(3.1 միավորով) և* ***աշխատանքի ազատության*** *(5.3 միավորով) գնահատականները, անփոփոխ են մնացել* ***ներդրումների ազատության***, ***ֆինանսական ազատության*** *և* ***սեփականության իրավունքի պաշտպանության*** *գնահատականները, վատացել են* ***գործարարության***

ազատության *(1.0 միավորով),* ***հարկաբյուջետային ազատության*** *(0.1 միավորով),* ***կառավարության ծախսերի*** *(5.2 միավորով) և* ***կոռուպցիայից ազատության*** *(2.0 միավորով) գնահատականները: Մասնավորապես,*

- ***«Գործարարության ազատություն»*** *գործոնի գնահատականը նախորդ տարվա համեմատ վատացել է 1.0 միավորով և կազմել 82.4 միավոր: Ըստ «Հերիթիջի» փորձագետների, թեև 2010թ. ընթացքում կրճատվել են լիցենզավորման պահանջները և արդիականացվել են սնանկության գործընթացները, այնուամենայնիվ, գործարարության կանոնակարգումների բյուրոկրատական կիրարկումը, զուգակցվելով ոչ զգալի կոռուպցիայի հետ, շարունակում է մնալ Հայաստանում գործարարությամբ զբաղվելու էական խոչընդոտ: Նկատենք, որ «Գործարարության ազատություն» գործոնի գնահատականը Հերիթիջի փորձագետները վերցնում են Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը» հետազոտությունից, որի վերջին հրապարակման մեջ Հայաստանի գնահատականը վատացել էր:*

- ***«Հարկաբյուջետային ազատություն»*** *գործոնի գնահատականը նախորդ տարվա համեմատ վատացել է աննշան՝ 0.1 միավորով և կազմել 89.2 միավոր: Նկատենք, որ հարկաբյուջետային ազատությունը չափում է գործարարության հարկային բեռը, որը ներառում է ինչպես ուղղակի հարկերի, այսինքն՝ եկամտահարկի և շահութահարկի բեռի, այնպես էլ ՀՆԱ-ում հարկային եկամուտների տեսակարար կշռի ցուցանիշը: Եվ քանի որ 2010թ.-ին ՀՆԱ-ում հարկային եկամուտների տեսակարար կշիռը նախորդ տարվա համեմատ աճել է 0.3%-ով և կազմել 16.8%, հետևաբար Հայաստանի հարկաբյուջետային ազատության գնահատականը վատացել է:*
- ***«Կառավարության ծախսեր»*** *գործոնի գնահատականը նախորդ տարվա համեմատ իջել է 5.2 միավորով և կազմել 85.7 միավոր: Այս գործոնը դիտարկում է կառավարության ծախսերի, ներառյալ սպառումն ու տրանսֆերտները, տեսակարար կշիռը ՀՆԱ-ում: Հետևաբար, այս գործոնի գնահատականի վատացումը պայմանավորվել է այն հանգամանքով, որ նախորդ տարվա համեմատ Հայաստանի Կառավարության ծախսերը ՀՆԱ-ում աճել*

են 4.4%-ով և 2010 թ. կազմել 21.8%: Հարկ է նկատել, որ «Հերիթիջի» փորձագետները գիտակցում են այդ ծախսերի կատարման անհրաժեշտությունը և որպես դրական երևույթ նշում են, որ այդ ծախսերը ֆինանսական ճգնաժամի և տնտեսական անկման պայմաններում ուղղված են եղել սոցիալական ապահովության խնդիրների լուծմանը:

- ***«Կոռուպցիայից ազատություն»*** *գործոնի գնահատականի հիմքում դրվել է «Թրանսփերենսի ինտերնեյշնլի» «Կոռուպցիայի ընկալման» 2009թ. ինդեքսը, որով Հայաստանը աշխարհի 180 երկրների թվում գրավում էր 120-րդ տեղը: Ըստ «Հերիթիջի» փորձագետների, Հայաստանում «կոռուպցիան լայն տարածում ունի բոլոր մակարդակներում և բոլոր հատվածներում: Պետական պաշտոնյաների կողմից կաշառք պահանջելը դիտարկվում է որպես լայնորեն ընդունված պրակտիկա: Կառավարության հետ կապված ձեռնարկչատիրությունը մենիշխանություն ունի բազմաթիվ կենսական նշանակություն ունեցող ապրանքների ներմուծման ոլորտներում»:*

Չնայած վերոնշյալ վատացումներին, «Հերիթիջի» փորձագետները բարձր են գնահատել անցած տասնամյակում Հայաստանում իրականացված շուկայական ազատականացումը և ապապետականացումը, որը խթանել է տնտեսության զարգացումը: Չնայած վերջին տարիներին արձանագրված տնտեսական աճի տեմպերի դանդաղեցմանը, մակրոտնտեսական քաղաքականության միջավայրը՝ ցածր հարկային դրույքների և կառավարության կայուն ծախսերի պայմաններում խթանել է երկարաժամկետ տնտեսական աճը: Կանոնակարգման դաշտը սահուն է և առևտրի բաց ռեժիմը՝ ցածր մաքսային դրույքներով հեշտացրել է ապրանքների ազատ հոսքերը: «Հերիթիջի» փորձագետների կարծիքով, Հայաստանի տնտեսական ազատության գնահատականի հետագա բարձրացումը կպահանջի ինստիտուցիոնալ բարեփոխումների հետագա խորացում, որոնք ներառում են սեփականության իրավունքների պաշտպանությունը և դատական համակարգի ուժեղացումը: Կոռուպցիան մնում է լայնորեն տարածված տնտեսության շատ հատվածներում: Չնայած հարկային դրույքների համեմատաբար ցածր մակարդակին, հարկերի վճարումից խուսափելը աճող մտահոգություն առարկա է:

Հայաստանի տնտեսական ազատության մակարդակը, 2000թ-ից սկսած, հիմնականում եղել է 60.0-69.9% միջակայքում (բացառությամբ 2004 և 2006թթ., երբ գնահատականները բարձր են եղել 70%-ից), այսինքն, ըստ «Հերիթիջի» դասակարգման, Հայաստանը վերջին 10 տարիների ընթացքում համարվել է տնտեսապես «չափավոր ազատ» երկիր, թեև հարկ է նշել, որ այդ տարիների ընթացքում Հայաստանի գնահատականը գրեթե միշտ մոտ է եղել միջակայքի առավելագույն սահմանին (տե՛ս աղյուսակ 2):

<u>Հայաստանը տարածաշրջանային համապատկերում</u>. *Հայաստանը տնտեսական ազատության մակարդակով Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի ու նախկին ԽՍՀՄ երկրներից զիջում է Էստոնիային, Լիտվային, Չեխիային և Վրաստանին (տե՛ս աղյուսակ 1):*

«Տնտեսական ազատության 2011 թ. ինդեքսի» հիմքում ընկած 10 գործոններից 8-ով Հայաստանը գերազանցում է աշխարհի 183 երկրների միջին ցուցանիշը: Ինչպես և նախորդ տարի, Հայաստանը զիջում է աշխարհի 2011թ. միջին ցուցանիշին միայն «Սեփականության իրավունքի

պաշտպանության» և «Կոռուպցիայից ազատության» գնահատականներով:

Տնտեսական ազատության ինդեքսով Հայաստանից զգալիորեն հետ է մնում Մերձբալթյան երկրներից Լատվիան, որը զբաղեցնում է 56-րդ տեղը: ԱՊՀ երկրներից հաջորդը Ղազախստանն է, որը ներկայումս զբաղեցնում է 78-րդ տեղը (տե՛ս աղյուսակ 1):

Եվրոպական տարածաշրջանի 43 երկրների շարքում Հայաստանը 2011թ. գրավել է 19-րդ տեղը՝ նախորդ տարվա 21-րդ տեղի փոխարեն, իսկ Վրաստանը զբաղեցնում է 15-րդ տեղը (տե՛ս աղյուսակ 2): Հայաստանի տնտեսական ազատության գնահատականը (69.7 միավոր) բարձր է եվրոպական տարածաշրջանի միջինից (66.8 միավոր):

*Հայաստանի հետ մեկտեղ, տնտեսապես «**չափավոր ազատ**» երկրների շարքն են դասվում նաև Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրները, բացառությամբ Սերբիայի, Բոսնիա և Հերցեգովինայի, որոնք ներկայումս դասվում են «հիմնականում ոչ ազատ» երկրների թվին: Տնտեսապես «**չափավոր ազատ**» երկրների թվին են դասվում նաև նախկին ԽՍՀՄ երկրներից՝ Լատվիան, Ղրղզստանը և Ղազախստանը (տե՛ս աղյուսակ 1): 2011թ. տնտեսական ազատության*

*ինդեքսով Վրաստանը դասվում է «**հիմնականում ազատ**» երկրների շարքը:*

Կից աղյուսակների տեսքով ներկայացվում են նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, եվրոպական տարածաշրջանի երկրների 2011 թ. տնտեսական ազատության ինդեքսների համեմատական գնահատականները, ինչպես նաև Հայաստանի 1996-2011թթ. և հարավկովկասյան երկրների 2007–2011թթ. ինդեքսները՝ ըստ «Հերիթիջ» հիմնադրամի:

Նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների «Տնտեսական ազատության ինդեքսըե ըստ «Հերիթիջե հիմնադրամի գնահատականների[1] (2011 թվական)

Աղյուսակ 1

Երկրի դիրքը աշխարհի 183	Երկիր	Գնահատականներ						2011 թ. գնահատականն ըստ առանձին գործոնների									
		2011	2010	2009	2008	2007	2006	Ընդհանուր դրել	Աղտոտվածություն	Ընդհանուր կառավարում	Ընդհանուր իրավական համակարգ	Ընդհանուր կիրառվող հարկային բեռ	Ընդհանուր կառավարության ծախսեր	Ընդհանուր դրամական միջոց	Ընդհանուր ֆիսկալային առողջություն	Ընդհանուր դրամական ազատություն	Ընդհանուր ճկունություն աշխատանքի շուկայում	Ընդհանուր կենտրոնացում
14	Էստոնիա	**75.2**	74.7	76.4	77.9	78.0	74.9	80.9	87.6	80.7	52.2	78.7	90.0	80.0	80.0	66.0	55.8
24	Լիտվա	**71.3**	70.3	70.0	70.9	71.5	71.8	81.7	87.6	86.1	58.0	74.5	80.0	80.0	60.0	49.0	55.6
28	Չեխիա	**70.4**	69.8	69.4	68.1	67.4	66.4	69.8	87.6	81.0	44.8	80.0	70.0	80.0	65.0	49.0	77.0
29	Վրաստան	**70.4**	70.4	69.8	69.2	69.3	64.5	87.3	89.2	87.5	60.3	76.7	70.0	60.0	40.0	41.0	92.1
36	Հայաստան	**69.7**	69.2	69.9	69.9	68.6	70.6	82.4	85.5	89.2	85.7	76.0	75.0	70.0	30.0	27.0	75.9
37	Սլովակիա	**69.5**	69.7	69.4	70.0	69.6	69.8	73.4	87.6	84.2	63.7	81.6	75.0	70.0	50.0	45.0	64.5
51	Հունգարիա	**66.6**	66.1	66.8	67.6	64.8	65	76.5	87.6	69.7	27.4	75.9	75.0	70.0	65.0	51.0	67.7
55	Մակեդոնիա	**66.0**	65.7	61.2	61.1	60.6	59.2	64.6	83.6	90.0	64.3	84.5	60.0	60.0	35.0	38.0	79.7
56	Լատվիա	**65.8**	66.2	66.6	68.3	67.9	66.9	72.8	87.6	82.5	55.5	73.5	80.0	50.0	50.0	45.0	61.3

[1] Աղյուսակում ներկայացված են 2006-2008 թթ. «Տնտեսական ազատության ինդեքսների»՝ «Հերիթիջ» հիմնադրամի կողմից վերահաշվարկված գնահատականները: Աղբյուրը՝ http://www.heritage.org/index/excel/DownloadRawData.xls:

60	Բուլղարիա	**64.9**	62.3	64.6	63.7	62.7	64.1	75.8	87.6	86.9	58.3	75.5	55.0	60.0	30.0	38.0	82.0
63	Ռումինիա	**64.7**	64.2	63.2	61.7	61.2	58.2	72.0	87.6	86.8	57.6	74.4	80.0	50.0	40.0	38.0	60.8
66	Սլովենիա	**64.6**	64.7	62.9	60.2	59.6	61.9	83.6	87.6	65.1	41.1	80.5	70.0	50.0	60.0	66.0	41.8
68	Լեհաստան	**64.1**	63.2	60.3	60.3	58.1	59.3	61.4	87.6	74.0	43.8	78.1	65.0	60.0	60.0	50.0	61.2
70	Ալբանիա	**64.0**	66.0	63.7	62.4	61.4	60.3	67.1	79.8	92.1	68.7	79.9	65.0	70.0	35.0	32.0	50.4
76	Մոնտենեգրո	**62.5**	63.6	58.2	_	_	_	71.3	83.6	89.4	28.6	76.0	55.0	50.0	40.0	39.0	92.3
78	Ղազախստան	**62.1**	61.0	60.1	61.1	59.6	60.2	74.3	80.9	87.3	78.5	69.9	30.0	50.0	35.0	27.0	88.4
82	Խորվաթիա	**61.1**	59.2	55.1	54.1	53.4	53.6	65.2	87.6	74.6	50.3	78.5	70.0	60.0	40.0	41.0	44.1
83	Ղրղզստան	**61.1**	61.3	61.8	61.1	60.2	61.0	75.4	63.2	92.6	74.2	68.6	55.0	50.0	25.0	19.0	88.1
92	Ադրբեջան	**59.7**	58.8	58.0	55.3	54.6	53.2	72.9	77.1	83.9	71.0	72.6	55.0	40.0	20.0	23.0	81.1
101	Սերբիա	**58.0**	56.9	56.6	_	_	_	59.0	75.2	83.6	41.9	66.0	60.0	50.0	40.0	35.0	68.9
104	Բոսնիա և Հերցեգովինա	**57.5**	56.2	53.1	53.9	54.4	55.6	60.4	86.0	83.9	24.1	80.6	70.0	60.0	20.0	30.0	60.2
120	Մոլդովա	**55.7**	53.7	54.9	57.9	58.7	58.0	69.5	80.2	85.6	48.1	77.0	35.0	50.0	40.0	33.0	39.0
128	Տաջիկստան	**53.5**	53.0	54.6	54.4	53.6	52.6	60.7	82.5	88.6	77.3	64.5	20.0	40.0	25.0	20.0	56.4
143	Ռուսաստան	**50.5**	50.3	50.8	49.8	52.2	52.4	50.7	68.2	82.7	65.1	63.1	25.0	40.0	25.0	22.0	62.9
155	Բելառուս	**47.9**	48.7	45.0	45.3	47.0	47.5	70.6	80.3	83.6	26.2	62.2	20.0	10.0	20.0	24.0	82.3
163	Ուզբեկստան	**45.8**	47.5	50.5	51.9	51.5	48.7	66.8	66.2	90.5	71.0	61.7	0.0	10.0	15.0	17.0	60.2
164	Ուկրաինա	**45.8**	46.4	48.8	51.0	51.5	54.4	47.1	85.2	77.3	32.9	63.2	20.0	30.0	30.0	22.0	50.0
169	Թուրքմենստ.	**43.6**	42.5	44.2	43.4	43.0	43.8	30.0	79.2	93.6	95.5	69.6	0.0	10.0	10.0	18.0	30.0
	Համաշխարհային միջին	**59.7**	**64.30**	**74.83**	**76.30**	**63.87**	**73.43**	**50.22**	**48.55**	**43.60**	**40.49**	**61.45**	**59.70**	**64.30**	**74.83**	**76.30**	**63.87**

Եվրոպական տարածաշրջանի երկրների տնտեսական ազատության գնահատականները ըստ «Հերիթիջ հիմնադրամի (2011 թվական)

Աղյուսակ 2

Երկրի դիրքը աշխարհի 183 երկրների շարքում	Դիրքը տարածաշրջանի 43 երկրների շարքում	Երկիրը	2011 թ. գնահատականը	Փոփոխությունը 2010 թ. համեմատությամբ	2011 թ. գնահատականն ըստ գործոնների									
					Գերակայության դրսեւորում	Կառավարության վերաբերմունքը	Հարկային քաղաքականություն	Միջամտություն գների նկատմամբ	Միջամտություն աշխատանքի շուկայում	Կարգավորվող միջավայր	Ֆինանսական դրսեւորում	Սեփականության իրավունք	Կոռուպցիայի ճնշում	Միջամտություն գործունեության մեջ
5	1	Շվեյցարիա	81.9	0.8	80.2	90.0	68.4	69.3	83.8	80.0	80.0	90.0	90.0	87.8
7	2	Իռլանդիա	78.7	-2.6	92.0	87.6	72.1	47.1	80.7	90.0	70.0	90.0	80.0	77.5
8	3	Դանիա	78.6	0.7	99.7	87.6	43.2	19.5	81.4	90.0	90.0	90.0	93.0	92.1
13	4	Լյուքսեմբուրգ	76.2	0.8	76.4	87.6	66.7	58.5	82.1	95.0	80.0	90.0	82.0	44.1
14	5	Էստոնիա	75.2	0.5	80.9	87.6	80.7	52.2	78.7	90.0	80.0	80.0	66.0	55.8
15	6	Նիդեռլանդ.	74.7	-0.3	81.9	87.6	50.6	36.8	82.7	90.0	80.0	90.0	89.0	58.3
16	7	Անգլիա	74.5	-2.0	94.6	87.6	52.0	32.9	74.9	90.0	80.0	85.0	77.0	71.2
17	8	Ֆինլանդիա	74.0	0.2	95.0	87.6	65.3	26.5	80.7	85.0	80.0	90.0	89.0	41.4
18	9	Կիպրոս	73.3	2.4	80.1	82.6	74.6	45.6	87.6	75.0	70.0	80.0	66.0	71.4
21	10	Ավստրիա	71.9	0.3	72.8	87.6	50.3	28.0	82.9	80.0	70.0	90.0	79.0	78.2
22	11	Շվեդիա	71.9	-0.5	95.0	87.6	37.6	17.3	80.1	85.0	80.0	90.0	92.0	54.0
23	12	Գերմանիա	71.8	0.7	89.6	87.6	58.5	42.7	83.9	85.0	60.0	90.0	80.0	40.6
24	13	Լիտվա	71.3	1.0	81.7	87.6	86.1	58.0	74.5	80.0	80.0	60.0	49.0	55.6
28	14	Չեխիա	70.4	0.6	69.8	87.6	81.0	44.8	80.0	70.0	80.0	65.0	49.0	77.0
29	15	Վրաստան	70.4	0.0	87.3	89.2	87.5	60.3	76.7	70.0	60.0	40.0	41.0	92.1
30	16	Նորվեգիա	70.3	0.9	88.3	89.4	51.6	51.5	75.1	65.0	60.0	90.0	86.0	45.8
31	17	Իսպանիա	70.2	0.6	77.2	87.6	61.0	49.3	82.4	80.0	80.0	70.0	61.0	53.0
32	18	Բելգիա	70.2	0.1	92.6	87.6	41.8	25.0	82.5	80.0	70.0	80.0	71.0	71.0
36	**19**	**Հայաստան**	**69.7**	**0.5**	**82.4**	**85.5**	**89.2**	**85.7**	**76.0**	**75.0**	**70.0**	**30.0**	**27.0**	**75.9**
37	20	Սլովակիա	69.5	-0.2	73.4	87.6	84.2	63.7	81.6	75.0	70.0	50.0	45.0	64.5
44	21	Իսլանդիա	68.2	-5.5	92.7	88.2	69.8	0.0	68.6	65.0	60.0	90.0	87.0	60.7
51	22	Հունգարիա	66.6	0.4	76.5	87.6	69.7	27.4	75.9	75.0	70.0	65.0	51.0	67.7
55	23	Մակեդոնիա	66.0	0.3	64.6	83.6	90.0	64.3	84.5	60.0	60.0	35.0	38.0	79.7
56	24	Լատվիա	65.8	-0.4	72.8	87.6	82.5	55.5	73.5	80.0	50.0	50.0	45.0	61.3
57	25	Մալթա	65.7	-1.5	70.0	87.6	62.5	39.8	80.1	75.0	60.0	70.0	52.0	60.0
60	26	Բուլղարիա	64.9	2.6	75.8	87.6	86.9	58.3	75.5	55.0	60.0	30.0	38.0	82.0
63	27	Ռումինիա	64.7	0.5	72.0	87.6	86.8	57.6	74.4	80.0	50.0	40.0	38.0	60.8
64	28	Ֆրանսիա	64.6	0.4	85.6	82.6	52.3	16.4	83.7	55.0	70.0	80.0	69.0	51.4
66	29	Սլովենիա	64.6	-0.1	83.6	87.6	65.1	41.1	80.5	70.0	50.0	60.0	66.0	41.8
67	30	Թուրքիա	64.2	0.4	68.7	85.4	78.2	83.6	72.7	70.0	50.0	50.0	44.0	39.6
68	31	Լեհաստան	64.1	0.9	61.4	87.6	74.0	43.8	78.1	65.0	60.0	60.0	50.0	61.2
69	32	Պորտուգալիա	64.0	-0.4	80.1	87.6	61.1	36.2	82.3	70.0	60.0	70.0	58.0	34.7
70	33	Ալբանիա	64.0	-2.0	67.1	79.8	92.1	68.7	79.9	65.0	70.0	35.0	32.0	50.4
76	34	Մոնտենեգրո	62.5	-1.1	71.3	83.6	89.4	28.6	76.0	55.0	50.0	40.0	39.0	92.3
82	35	Խորվաթիա	61.1	1.9	65.2	87.6	74.6	50.3	78.5	70.0	60.0	40.0	41.0	44.1
87	36	Իտալիա	60.3	-2.4	77.3	87.6	55.4	28.6	82.1	75.0	60.0	50.0	43.0	44.4
88	37	Հունաստան	60.3	-2.4	76.2	82.6	65.9	34.3	80.6	60.0	60.0	50.0	38.0	55.2
101	38	Սերբիա	58.0	1.1	59.0	75.2	83.6	41.9	66.0	60.0	50.0	40.0	35.0	68.9
104	39	Բոսնիա և	57.5	1.3	60.4	86.0	83.9	24.1	80.6	70.0	60.0	20.0	30.0	60.2

		Հերցեգովինա												
120	40	Մոլդովա	55.7	2.0	69.5	80.2	85.6	48.1	77.0	35.0	50.0	40.0	33.0	39.0
143	41	Ռուսաստան	50.5	0.2	50.7	68.2	82.7	65.1	63.1	25.0	40.0	25.0	22.0	62.9
155	42	Բելառուս	47.9	-0.8	70.6	80.3	83.6	26.2	62.2	20.0	10.0	20.0	24.0	82.3
164	43	Ուկրաինա	45.8	-0.6	47.1	85.2	77.3	32.9	63.2	20.0	30.0	30.0	22.0	50.0
		Տարածաշրջանային միջին	**66.8**	**---**	**76.96**	**85.76**	**71.06**	**43.89**	**77.84**	**69.88**	**63.49**	**61.16**	**55.98**	**61.81**

Հայաստանի «Տնտեսական ազատության ինդեքսըե ըստ «Հերիթիջե հիմնադրամի գնահատականների (1996-2011 թվականներ) [2]

Աղյուսակ 3

		2011	2010	2009	2008	2007	2006	2005	2004	2003	2002	2001	2000	1999	1998	1997	1996
Երկրների թիվը		**183**	**183**	**179**	**157**	**157**	**157**	**155**	**155**	**157**	**157**	**155**	**161**	**161**	**156**	**150**	**142**
Երկրի դիրքը		**36**	**38**	**31**	**30**	**34**	**27**	**25**	**23**	**37**	**32**	**46**	**62**	**97**	**117**	**123**	**125**
	ԳՈՐԾՈՆՆԵՐԸ																
1.	Գործարարության ազատությունը	82.4	83.4	83.7	81.3	80.8	77.6	55	55	55	55	55	55	55	55	55	55
2.	Առևտրի ազատությունը	85.5	80.5	86.4	85.0	85.6	80.6	80.0	80.0	81.2	81.4	77.0	77.0	75.0	75.0	83.0	69.0
3.	Հարկաբյուջետային ազատությունը	89.2	89.3	90.0	89.0	89.7	90.0	89.9	90.0	88.9	88.3	81.9	79.3	80.3	80.9	80.7	75.8
4.	Կառավարության չափը	85.7	90.9	89.7	86.4	90.8	90.7	88.9	88.7	84.1	81.3	85.5	86.8	82.1	75.1	41.7	0.0
5.	Դրամավարկային ազատությունը	76.0	72.9	77.8	84.6	80.3	80.6	82.0	84.5	81.7	91.1	77.8	69.1	55.5	0.0	0.0	0.0
6.	Ներդրումների ազատությունը	75.0	75.0	70.0	70	60	70	70	70	70	70	70	50	30	30	30	30
7.	Ֆինանսական ազատությունը	70.0	70.0	70.0	70	70	70	90	90	70	70	70	70	50	50	50	50
8.	Սեփականության իրավունքը	30.0	30.0	35.0	35	30	50	50	50	50	50	50	50	50	50	50	50
9.	Կոռուպցիայից ազատությունը	27.0	29.0	30.0	29	29	31	30.0	25.0	25.0	25.0	30	30	30	30	30	50
10.	Աշխատանքի ազատությունը	75.9	70.6	66.3	68.2	70.3	65.3	62.1	_	_	_	_	_	_	_	_	_
	«Տնտեսական ազատության ինդեքսըե	69.7	69.2	69.9	69.9	68.6	70.6	69.8	70.3	67.3	68.0	66.4	63.0	56.4	49.6	46.7	42.2

[2] «Հերիթիջ» հիմնադրամի մեթոդաբանության փոփոխության արդյունքում 1996-2008 թթ. «Տնտեսական ազատության ինդեքսի» գնահատականները վերահաշվարկվել են՝ հանգեցնելով նախկին հրապարակումների համեմատ տարբեր տարիներին Հայաստանի դիրքի փոփոխության: Աղբյուրը՝ http://www.heritage.org/index/excel/DownloadRawData.xls:

Հարավկովկասյան երկրների «Տնտեսական ազատության ինդեքսըե ըստ «Հերիթիջե հիմնադրամի գնահատականների (2007-2011 թվականներ) [3]

Աղյուսակ 4

		ՀԱՅԱՍՏԱՆ					ՎՐԱՍՏԱՆ					ԱԴՐԲԵՋԱՆ				
		2011	**2010**	**2009**	**2008**	**2007**	**2011**	**2010**	**2009**	**2008**	**2007**	**2011**	**2010**	**2009**	**2008**	**2007**
Երկրների թիվը		**183**	**183**	**179**	**157**	**157**	**183**	**183**	**179**	**157**	**157**	**183**	**183**	**179**	**157**	**157**
Երկրի դիրքը		**36**	**38**	**31**	**30**	**34**	**29**	**26**	**32**	**32**	**31**	**92**	**96**	**99**	**105**	**111**
	ԳՈՐԾՈՆՆԵՐԸ															
1.	Գործարարության ազատությունը	82.4	83.4	83.7	81.3	80.8	87.3	87.9	86.6	85.0	80.8	72.9	74.6	74.6	62.6	58.0
2.	Առևտրի ազատությունը	85.5	80.5	86.4	85.0	85.6	89.2	89.1	80.6	71.0	71.8	77.1	77.1	78.4	78.4	77.6
3.	Հարկաբյուջետային ազատությունը	89.2	89.3	90.0	89.0	89.7	87.5	89.1	86.8	90.7	91.2	83.9	79.5	79.7	80.4	80.8
4.	Կառավարության չափը	85.7	90.9	89.7	86.4	90.8	60.3	65.3	74.6	81.3	88.4	71.0	77.5	77.5	82.9	79.9
5.	Դրամավարկային ազատությունը	76.0	72.9	77.8	84.6	80.3	76.7	70.2	70.9	71.4	77.8	72.6	62.7	66.3	76.5	76.8
6.	Ներդրումների ազատությունը	75.0	75.0	70.0	70	60	70.0	70.0	70.0	70	60	55.0	55.0	30.0	30	30
7.	Ֆինանսական ազատությունը	70.0	70.0	70.0	70	70	60.0	60.0	60.0	60	70	40.0	40.	40.0	30	30
8.	Սեփականության իրավունքը	30.0	30.0	35.0	35	30	40.0	40.0	35.0	35	30	20.0	20.0	25.0	30	30
9.	Կոռուպցիայից ազատությունը	27.0	29.0	30.0	29	29	41.0	39.0	34.0	28	23	23.0	19.0	21.0	24	22
10.	Աշխատանքի ազատությունը	75.9	70.6	66.3	68.2	70.3	92.1	93.7	99.4	100.0	99.9	81.1	82.5	87.0	58.7	60.8
	«Տնտեսական ազատության ինդեքսըե	69.7	69.2	69.9	69.9	68.6	70.4	70.4	69.8	69.2	69.3	59.7	58.8	58.0	55.3	54.6

[3] «Հերիթիջ» հիմնադրամի մեթոդաբանության փոփոխության արդյունքում 2007-2008 թթ. «Տնտեսական ազատության ինդեքսի» գնահատականները վերահաշվարկվել են՝ հանգեցնելով նախկին հրապարակումների համեմատ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի դիրքերի փոփոխության: Աղբյուրը՝ http://www.heritage.org/index/excel/DownloadRawData.xls: